ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ն. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆԻ՝ ԲՐՅՈՒՍԵԼ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

- **ՔԱՂԱՔ / ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն), 14-16-ը նոյեմբերի 2017 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

- *Մասնակցություն Եվրոպական միության Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի ղեկավար կոմիտեի նիստին:*

2017թ. նոյեմբերի 14-16-ը մեկնեցի Բրյուսել (Բելգիայի Թագավորություն)՝ մասնակցելու ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի ղեկավար կոմիտեի նիստին, որը տեղի ունեցավ նոյեմբերի 15-ին:

Հանդիպմանը ներկա էին Արևելյան գործընկերության երկրների ներկայացուցիչներ՝ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Գունայ Ռահիմովան և մշակութային և սոցիալական հարցերով փորձագետ Հուսեյն Հումբատովը, Բելառուսի մշակույթի նախարարության արտաքին կապերի վարչության խորհրդական Յուլիա Հրաչիխան, Վրաստանի մշակույթի նախարարի տեղակալ Լ. Խառատիշվիլին և ռազմավարական պլանավորման խորհրդատու Զվիադ Առչուաձեն, Բելառուսի «EuroBelarus» ՀԿ ծրագրերի ղեկավար Տատյանա Պոշևալովան, Մոլդովայի մշակույթի նախարարության պետքարտուղար Ա. Չիստոլը և «Մշակութային քաղաքականության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Վյաչեսլավ Ռեբիշիչին, Ուկրաինայի մշակույթի նախարարի տեղակալ Սվետլանա Ֆոմենկոն և Մշակութային կառավարման կենտրոնի տնօրեն Իգոր Սավչակը:

Հանդիպմանը Հայաստանը ներկայացնում էի ես և «Ազատ քաղաքացի» քաղաքացիական հասարակության աջակցության կենտրոն» ՀԿ նախագահ Հովսեփ Խուրշուդյանը: Ղեկավար կոմիտեի նիստին մասնակցում էին նաև Ուկրաինայի

Բրիտանական խորհրդի, Եվրոպայի խորհրդի, ԵՄ մի շարք ծրագրերի ղեկավարներ ու ներկայացուցիչներ, ծրագրի ղեկավար Թիմ Ուիլյամսը և գլխավոր փորձագետ Անաստասիա Նուրզինսկայան:

Նիստը նախագահում էր Եվրապական Հանձնաժողովի Հայաստանի, Բելառուսի, Ադրբեջանի և Արևելյան գործընկերության վարչության ղեկավար Վասիլիս Մարագոսը: Օրակարգի հաստատումից հետո խոսքը փոխանցվեց ԵՄ Արևելյան գործընկերության «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի համակարգող Թիմ Վիլիամսին: Վերջինս ներկայացրեց ծրագրի ամբողջ ընթացքում իրականացված միջոցառումները, ներառյալ՝ Եմ Արևելյան գործընկերության անդամ երկրներում կազմակերպված առանցքային դասընթացներն ու ֆորումները, մշակույթի ոլորտում իրականացված ուսումնասիրությունները:

Այնուհետև քննարկվեցին իրականացված ծրագրերը, առանձնակի ուշադրություն դարձվեց արդյունքների ամփոփմանը՝ վարպետության դասերին, առցանց դասընթացներին (հասանելի է ծրագրի էլեկտրոնային էջում՝ www.culturepartnership.eu), լրագրողների և հանրության հետ աշխատանքով զբաղվողների համար վերապատրաստումներին, հասարակական կազմակերպություն-ների հաշվետվություններին:

Իր ելույթում Ա. Նուրզինսկայան ներկայացրեց ծրագրի ընթացքում հանրության հետ կապերի մանրամասները, այդ թվում՝ սոցիալական ցանցերով և կայքի միջոցով իրականացված նախագծերը:

Նիստի երկրորդ կեսին ելույթ ունեցան ծրագրի մասնակից պետությունների ներկայացուցիչները, ովքեր հակիրճ ներկայացրեցին ազգային մակարդակով իրականացված ծրագրերը, դրանց արդյունքները, իրենց գնահատականները և առաջարկները՝ ծրագրի հետագա հնարավոր զարգացման դեպքում:

Իմ ելույթում շնորհակալություն հայտնելով հրավերի համար՝ կարևորեցի Հայաստանի ներգրավվածությունը Եվրոպական միության Արևելյան գործընկերության «Ստեղծարար Եվրոպա» և «Մշակույթ և ստեղծարարություն» ազգային համակարգողների միջոցով իրականացվող տարածաշրջանային ծրագրերին, որոնցում ներգրավված են և՛ պետական կառավարման մարմինների, և՛ հանրային ու

մասնավոր հատվածում գործող մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կարևորեցի ծրագրի նպատակը՝ խթանել տարածաշրջանի երկրների մշակութային ոլորտի պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև ուղիղ կապերի զարգացմանը: Իրականացված նախագծերից ընդգծեցի արվեստի կառավարման առցանց դասընթացների դերը, քանի որ Հայաստանում դրանց մասնակցել էր 900-ից ավելի մարդ, որոնցից ավելի քան 350-ը ստացել են վկայական: Նաև արդյունավետ էր ծրագրի ընթացքում կազմակերպված «Ստեղծարար Հայաստան» համաժողովը, որին հրավիրվել էին տարբեր փարձագետներ և հանդիպել հայաստանյան մասնագետների հետ: Որպես դիտարկում նշեցի, որ ծրագրի ընթացքում եղել է գործընկերային համագործակցություն ծրագրի հայաստանյան համակարգող Բրիտանական խորհրդի հետ, սակայն թե ուսումնասիրություններ և վարպետության դասեր անցկացնող փորձագետների, և թե՛ ուսումնասիրությունների ընտրության հարցում մշակույթի նախարարության դերը կարող էր ավելին լինել, իսկ իրականացվող ծրագրերը՝ կարող էին ներդաշնակեցվել Հայաստանի ազգային մշակութային քաղաքականության հետ: Ծրագրի հետագա զարգացման նպատակով առաջարկեցի ստեղծել համագործակցության առցանց հարթակ՝ երկրների միջև մշակույթի կառավարման հետ կապված խնդիրներում փորձի փոխանակման նպատակով: Առանձանհատուկ նշեցի ԵՄ մշակութային ծրագրերից «Ստեղծարար Եվրոպայի» դերը և Հայաստանի՝ այս ծրագրին միացման ընթացքի մասին՝ հիշեցնելով, որ ՀՀ կառավարությունն արդեն իսկ տվել է ծրագրին միանալու իր համաձայնությունը, մինչդեռ այն դեռևս ԵՄ կողմից համաձայնեցման փուլում է, և խնդրեցի հնարավորության դեպքում միջամտել այդ գործընթացն արագացնելու համար:

Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ուկրաինայի և Մոլդովայի ներկայացուցիչներն իրենց ելույթներում ևս կարևորեցին ծրագրի հատկապես ուսուցողական բաղադրիչներն իրենց երկրների արվեստի կառավարիչների, մշակութային լրագրողների և պետական հաստատությունների ներկայացուցիչների համար:

Նիստի հաջորդ փուլում տեղի ունեցավ փակ քննարկում պետությունների ներկայացուցիչների և ԵՄ կողմից ծրագրի համակարգողների միջև ծրագրի հետագա

ընթացքի վերաբերյալ: Նկատի ունենալով, որ ծրագիրն ավարտվում է 2018-ի սկզբին՝ առաջարկվեց ԵՄ ֆինանսավորմամբ նոր ծրագիր սկսելու համար ներկայացնել գաղափարներ, որոնք ուղղված կլինեն մշակույթի ոլորտում համագործակցությանը: Առաջարկեցի նոր ծրագրում անպայմանորեն նկատի ունենալ, որ այն պետք է համահունչ լինի երկրների ազգային քաղաքականության երակարաժամկետ նպատակներին, ուղղված լինի մշակութային և ստեղծարար ինդուստրիաների ուսումնասիրմանն ու զարգացմանը: Առաջարկեցի նաև դիտարկել ԵՄ այլ պետական և մասնավոր կառույցների ներգրավումը մշակութային նախաձեռնությունների աջակցման գործին, մասնավորապես՝ Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի կողմից մշակութային կազմակերպություններին տեխնիկական աջակցության տրամադրումը, Ստեղծարար Եվրոպա ծրագրի շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները: Պայմանավորվեցինք հետագայում մշակել Արևելյան գործընկերության երկրների համար մշակույթի, կրթության և գործարարության բաղադրիչներ պարունակող համատեղ նոր ծրագիր՝ հաշվի առնելով վերոնշյալ բոլոր դիտարկումները:

Նիստի ավարտին քննարկվեցին մշակութային ոլորտում իրականացվելիք հետագա ծրագրերն ու ընդունվեց ամփոփիչ արձանագրությունը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Ամփոփվեցին «Մշակույթ և ստեղծարարություն» ծրագրի արդյունքները, քննարկվեցին ծրագրի դրական և թերի կողմերը՝ հետագայում դրանք բացառելու նպատակով:

- Հայաստանը ևս մեկ անգամ իր պատրաստակամությունը հայտնեց մասնացել մշակույթի ոլորտում ԵՄ խոշորածավալ նախագծերին:

- Պայմանավորվեցինք հետագայում մշակել Արևելյան գործընկերության երկրների համար մշակույթի, կրթության և գործարարության բաղադրիչներ պարունակող համատեղ նոր ծրագիր:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ **Ն. Տեր-Վարդանյան**